Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
2018 թ.

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի բաժինը հաշվետու տարում կազմակերպել և իրականացրել է 2018-2019 թթ. առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը: Արդյունքում ընդունվել է 10 առկա և 18 հեռակա ուսուցմամբ ասպիրանտ: Վճարովի հիմունքներով ընդունվել է 1 (արտերկրացի) ասպիրանտ:

Տարեսկզբին ԳԱԱ ասպիրանտուրայում պետական պատվերով սովորում էր 128 ասպիրանտ, այդ թվում՝ (71-ը առկա, 57-ը հեռակա), վճարովի հիմունքներով՝ 8-ը (որից 4-ը արտերկրացի) ասպիրանտ: Հաշվետու տարում ավարտել է 49 ասպիրանտ՝ 35-ը առկա, 14-ը հեռակա և 4 վճարովի հիմունքներով ասպիրանտ, որից 2-ը արտերկրացի: 2018թ. ասպիրանտուրա են ընդունվել 10 առկա, 18 հեռակա և 1 վճարովի հիմունքներով (արտերկրացի) ասպիրանտ: Մեկ առկա ասպիրանտ տեղափոխվել է ԵՊՀ-ից:

Առ 01.01. 2019 թ. պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը 107 է, 47-ը առկա, 60-ը հեռակա, նաև 4-ը՝ վճարովի հիմունքներով արտերկրի քաղաքացիներ: Հայցորդների թիվը 200 է. 75-ը՝ վճարովի, 125-ն՝ անվճար (ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում որակավորման քննություններին նախապատրաստելու և դրանք հանձնելու նպատակով ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել են գարնանային և աշնանային դասընթացներ "Օտար լեզու" (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն), "Ինֆորմատիկա" և "Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն" առարկաներից:

Տարվա կտրվածքով քննություններ են հանձնել՝ օտար լեզվից՝ 50, ինֆորմատիկայից 57, մեթոդաբանությունից՝ 56 ասպիրանտ և հայցորդ: Հաշվետու տարում պաշտպանվել է 48 թեկնածուական ատենախոսություն, որից 32-ը հաշվետու տարում ավարտած ասպիրանտների կողմից, 2-ը արտերկրացի ասպիրանտների և 14-ը հայցորդների կողմից:

Բաժնը հաշվետու տարում կատարել է "ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ասպիրանտուրայի ընդունելության, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման" կանոնակարգի լրամշակում՝ ներառելով ՀՀ ԿԳ նախարարության և ԲՈԿ-ի կանոնակարգերում կատարված փոփոխությունները: Կատարվել է ասպիրանտների և հայցորդների ուսումնական գործընթացի, ընթացակարգերի պատրաստման գիտակրթական ծրագրի մեթոդական փաստաթղթերի, պայմանագրերի և եզրափակիչ ատեստավորման կազմակերպման կանոնակարգի վերամշակում:

Պատրաստվել և տրվել են տեղեկանքներ՝ որակավորման քննությունների մասին ԲՈԿ ներկայացվող և զինկոմիսարիատներին ներկայացվող պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրելու վերաբերյալ:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահանջով կազմվել են ԳԱԱ գիտական կազմակերպություններում հաշվետու տարում ընդունված, սովորող և ավարտած ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների թվաքանակի և շարժի վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ՝ համաձայն «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման» ձևի և կարգի:

2019-2020թթ. ուսումնական տարվա անվճար տեղերի ձևավորման համար համակարգվել և ՀՀ ԿԳ նախարարություն են ներկայացվել ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի հայտերը: